Սպիտակ համայնք

| **Դրույթների անվանումը** | **Պահպանված է** | **Թերի է պահպանված** | **Պահպանված չէ** | **Հայտնաբերված խախտումները** | **Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ** | **Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները** |
|---|---|---|---|---|---|---|
| Հաշվառում-Տվյալ տարածքում բնակության վայրի մասին տեղեկանքների և բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տվյալների հավաքագրում /ծննդյան վկայական, անձնագիր/: | | **V** | | բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքները ոչ բոլոր երեխաների անձնական գործերում են առկա | երեխայի՝ մանկապարտեզ ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկում ունենալ նաև բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքը | քանի որ երեխաների անձնական գործերում առկա են բնակության վայրի մասին տեղեկանքներ, դրանք բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքներով փոխարինելու անհրաժեշտու-թյուն չկա: Նոր ընդունվող երեխաների անձնական գործերում բնակության վայրի վերաբերյալ տեղեկանքի փոխարեն այսուհետ պետք է պահանջել բնակչության պետական ռեգիստրում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հաշվառված լինելու մասին տեղեկանք: |
| Ընդգրկում-Հաստատության և ծնողի միջև կնքվող պայմանագրի հիման վրա հրամանագրված երեխաների ֆինանսավորում: | V | | | | | |
| Ծրագրերի մշակում և իրականացում-համայնքի իրավիճակի վերլուծություն, կարիքների ճշգրտում, համայնքի համախմբում, ծրագրի առաջարկի մշակում և ներկայացում, ծրագրի առաջարկում նախատեսված ներդրումների ապահովում: | V | | | | | |
| Նախադպրոցական հաստատության ղեկավար աշխատողների ընտրությունը, նշանակումը և պաշտոնից ազատում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշների համապատասխան: | V | | | | | |

Սպիտակի թթ. 1,2 մանկապարտեզներն աշխատում են 5-օրյա աշխատանքային շաբաթով և 9-ժամյա աշխատանքային օրով: Դա նշանակում է, որ պաշտոնային դրույքաչափերով դաստիարակներին պետք է հատկացվի 1.25-ական հաստիքային միավոր, մինչդեռ հատկացված է 1.12-ական հաստիքային միավոր, իսկ դաստիարակների օգնականներին պետք է հատկացվի 1.1-ական հաստիքային միավոր, մինչդեռ հատկացված է 1-ական հաստիքային միավոր, որով խախտվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2007 թվականի հունվարի 26-ի «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N 29-Ն հրամանով հաստատված հավելված 1-ի պահանջը: